ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ
(1889–1967)

Ծնվել է Վանաձորում՝ նահապետական գյուղացու ընտանիքում: Սկզբում նախագիտելիքներ է ստանում Զաքար վարժապետի դպրոցում, հետո ընդունվում է ծննդավայրի նորաբաց ռուսական ուսումնարանը, որն ավարտում է 1904–ին:

1906 թ. մեկնում է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոց ընդունվելու հույսով: Սակայն նյութական ծանր վիճակը հարկադրում է աշխատանքի անցնել տպարաններից մեկում: 1912–1919 թթ. աշխատում է «Մշակի» խմբագրությունում: 1919–ին վերադառնում է Երևան: Աշխատում է տարբեր հրատարակչություններում, Հայկինոյում, Գրողների միությունում: Տարբեր տարիներին լույս են տեսնում «Ցանկապատ», «Հազարան բլբուլ», «Ծովանը», «Պատերազմ», «Խնձորի այգին» ժողովածուները: Պատերազմի տարիներին գրում է «Պապ թագավոր», հետպատերազմյան շրջանում՝ «Հայոց բերդը» և «Վարազդատ» վեպերը:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով:

Վախճանվել է Երևանում: Թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում: